ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» սեպտեմբերի 2026 թվականի N 891-Ա

ԵՐՎԱՆԴ ԲԱԼԲԱԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի և կադաստրային կոմիտեում հաշվառված չափագրման տվյալների մուտքագրման 2026CKXSVQ ծածկագրի, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Երվանդ Բալբաբյանի կողմից 07-008-0337-0011 ծածկագրով 0.05 հա մակերեսով հողատարածքից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 7.6 քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

2. 07-008-0337-0011 ծածկագրով հողատարածքը հասցեավորել «**Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Սարալանջ թաղամաս, 22-րդ փողոց, թիվ 3**»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 03
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» սեպտեմբերի 2026 թվականի N 890-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ն. Իվանյանի 21.07.2026 թվականի թիվ 3475/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Նարեկ Իվանյանին սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 93-95 հասցեի հողատարածքը*** բաժանել 7 միավորի և հասցեավորել որպես
   - ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 93*** (հողամասի մակերեսը՝ 0.04400 հա, առանձնացվող հատված-5),
   - ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 93/1*** /հողամասի մակերեսը՝ 0.04628 հա, առանձնացվող հատված-6),
   - ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 93/2*** /հողամասի մակերեսը՝ 0.05432 հա, առանձնացվող հատված-7),
   - ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 93/3*** /հողամասի մակերեսը՝ 0.02430 հա, առանձնացվող հատված-4),
   - ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 95*** /հողամասի մակերեսը՝ 0.04400 հա, առանձնացվող հատված-3),
   - ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 95/1*** /հողամասի մակերեսը՝ 0.04400 հա, առանձնացվող հատված-2***),***
   - ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 95/2*** /հողամասի մակերեսը՝ 0.04610 հա, առանձնացվող հատված-1) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գրիգոր Ոսկանյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.սեպտեմբերի 03
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«03» սեպտեմբերի 2026 թվականի N 889-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Թինա Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված 30.93 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Պիռամիդա» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023PAGNHT ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 30.9 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան 6-րդ թաղամաս թիվ 23/1*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Թինա Գրիգորյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 03
Ք. Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«03» սեպտեմբերի 2026 թվականի N 888-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Անահիտ Պրազյանի կողմից ինքնակամ կառուցված 37.0 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Գեոտոպ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023FTDGC2 ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 37.0 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցական 8-րդ թաղամաս 1-ին փողոց 1-ին փակուղի թիվ 7/10*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Անահիտ Պրազյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 03
Ք. Չարենցական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» սեպտեմբերի 2026 թվականի N 887-Ա

ՆՈՐԻԿ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 7-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՇԵՆՔ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Ն. Մալխասյանի 13.08.2026 թվականի թիվ 3888/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Նորիկ Մալխասյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Չարենցավան 7-րդ թաղամաս 1-ին շենք թիվ 2 հասցեի ինքնակամ կառուցված 11.1 քմ արտաքին մակերեսով շինությունը՝ համաձայն ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավար Գ. Մանուկյանի 11.08.2026թ. թիվ ԳՄ/17203-2026 գրության և 30.01.2007թ. թիվ 2344514 սեփականության վկայականի:
2. Օրինական ճանաչված շինության և ինքնակամ բացված 1 դռան, 1 փակված դռան և տեղադրված 2 պատուհանների համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 16000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 02
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» օգոստոս 2026 թվականի N 886-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Պեպանյան	Թադևոս	30000	դրամ
Օհանյան	Գոհար	30000	դրամ
Հունանյան	Քնարիկ	30000	դրամ
Մելքոմյան	Գեղամ	30000	դրամ
Քոչարյան	Սոնա	15000	դրամ
Նազարյան	Հասմիկ	10000	դրամ
Նավասարդյան	Սուսաննա	10000	դրամ
Պետրոսյան	Ջեմմա	10000	դրամ
Սարգսյան	Նարինե	10000	դրամ
Սարումյան	Էլգար	10000	դրամ
Դարբինյան	Անահիտ	10000	դրամ
Հովհաննիսյան	Աննա	10000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. սեպտեմբեր 02
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«02» սեպտեմբերի 2026 թվականի N 885-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2026 թվականի օգոստոսի 31-ի համար 01/30.7/1/6629-2026 գրությունը /մուտք՝ 01.09.2026թ., մտից համար՝ 4188/04/, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Զեմֆիրա Բալասանյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2026 թվականի սեպտեմբերի 11-ին, ժամը 11:00-ին, ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1 հասցեում, Չարենցավանի համայնքապետարանի շենքում /նիստին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, ներկայացուցչի դեպքում լիազորագրով/:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 02
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2026 թվականի N 884-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ա. Նաղդալյանի 07.08.2026թ թիվ 3794/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Անի Նաղդալյանին և Արթուր Կարապետյանին պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 7-րդ փողոց 4-րդ նրբանցք թիվ 4 հասցեի հողատարածքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 7-րդ փողոց 4-րդ նրբանցք թիվ 4*** (հողամասի մակերեսը՝ 0.0802 հա, Անի Նաղդալյանին առանձնացվող հատված), ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 7-րդ փողոց 4-րդ նրբանցք թիվ 4/1*** /հողամասի մակերեսը՝ 0.0803 հա, Արթուր Կարապետյանին առանձնացվող հատված) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Լենդ Քոնսթրաշն» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. օգոստոսի 31
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2026 թվականի N 883-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Վ. Փանոյանի 25.06.2026 թվականի թիվ 2918/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Վարդան Փանոյանին սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Արզականի խճուղի 1-ին նրբանցք թիվ 6 հասցեի գույքը բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Արզականի խճուղի 1-ին նրբանցք թիվ 6 (հողամասի մակերեսը՝ 0.08771 հա, հատված 1) և Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Արզականի խճուղի թիվ 2/1 /հողամասի մակերեսը՝ 0.13357 հա, հատված 2/ միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 31
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» օգոստոս 2026 թվականի N 882-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Նիկողոսյան	Անահիտ	30000	դրամ
Միերյան	Թերեզա	30000	դրամ
Ղանդիլյան	Էրանակ	30000	դրամ
Ենոքյան	Սեդա	30000	դրամ
Սուքիասյան	Արայիկ	25000	դրամ
Շառոյան	Անահիտ	25000	դրամ
Մելիքյան	Աիդա	25000	դրամ
Կարապետյան	Անի	25000	դրամ
Մանուկյան	Սիլվարդ	20000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 31
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«31» օգոստոսի 2026 թվականի N 881-Ա

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հատակագծի, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գագիկ Ստեփանյանի կողմից 07-008-0417-0067 ծածկագրով 0.07 հա մակերեսով հողատարածքից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 27.8 քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:
2. 07-008-0417-0067 ծածկագրով հողատարածքը հասցեավորել «**Չարենցավան համայնք գյուղ Ալափարս, Այգեստան թաղամաս, 1-ին փողոց, թիվ 9**»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. օգոստոսի 31
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2026 թվականի N 880-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի, հաշվի առնելով Բաբկեն Միսակի Գևորգյանի մահվան փաստը (մահվան վկայական՝ ԱԲ 273573, տրված՝ 2018 թվականի մարտի 13-ին, քաղաքացիական կացության ակտերի գրանցման Չարենցավանի տարածքային բաժնի կողմից) և Ռազմիկ Գուրգենի Նազարյանի /լիազորված անձ/ դիմումը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 28-ի N 4133/07). ***որոշում եմ.***

1. Դադարեցնել 2005 թվականի նոյեմբերի 23-ին կնքված (գրանցված է Չարենցավանի նոտարական տարածքի նոտարի սեղանամատյանում N 2096) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության մասին պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. օգոստոսի 31
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2026 թվականի N 879-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ օրինական հատկացված հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ.-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծն ու փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատեր Սարգիս Խաչատրյանի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր, ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն, որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ.***

1. Սարգիս Խաչատրյանի կողմից փաստացի օգտագործվող 07-007-0101-0011 կադաստրային ծածկագրով 0.10243 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Նշված հողատարածքը հասցեավորել որպես **«Չարենցավան համայնք ք. Չարենցավան Սարալանջ թաղամաս 3-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 20»:**
3. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026HSHP8E ծածկագրի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 31
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«28» օգոստոսի 2026 թվականի N 878-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Արտակ Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված 32.3 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023MDL44Y ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 32.3 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Գ. Ռուսովի փողոց 6-րդ փակուղի թիվ 3*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Արտակ Գրիգորյանին*** ՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 28
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» օգոստոսի 2026 թվականի N 877-Ա

ՎԱԽԹԱՆԳ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԲՋՆԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Վ. Գալստյանի 26.08.2026 թվականի թիվ 4104/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վախթանգ Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գյուղ Բջնի 5-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 29 հասցեում գտնվող 0.1862 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 180.37 քմ արտաքին մակերեսով շինությունը՝ համաձայն ՀՀ Կադաստրի կոմիտեի թիվ 26082026-07-0647 տեղեկանքի և թիվ 13072018-07-0073 սեփականության վկայականի:
2. Օրինական ճանաչված շինությունների համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 303.000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 28
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«28» օգոստոսի 2026 թվականի N 876-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՐԱՉԻԿ ՄԻԽԱՅԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ԲՋՆԻԻ ԽՃՈՒՂԻ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 17 դեկտեմբերի 2025 թվականի <<<<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ 397-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք, գյուղ Արզական Բջնիի խճուղի 2-րդ փակուղի թիվ 9 հասցեի 0.06136 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա, որը չի դասվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին, 1998 թվականին ինքնակամ կառուցված 85.37 քմ մակերեսով շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և, նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Հրաչիկ Միխայելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.06136 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 1998 թվականին ինքնակամ կառուցվել է 85.37 քմ արտաքին մակերեսով շինություններ՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, գյուղ Արզական Բջնիի խճուղի 2-րդ փակուղի թիվ 9 հասցեի թիվ 13072026-07-0115 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով 0.06136 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա 1998 թվականին ինքնակամ կառուցված 85.37 քմ մակերեսով շինությունները համարել օրինական՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Գ. Մանուկյանի 24.08.2026թ. թիվ ԳՄ/17966-2026 գրության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 28
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» օգոստոսի 2026 թվականի N 875-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գևորգ Հովիկի Հովհաննիսյան անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք Երևան-Սևան մայրուղի թիվ 46 տեղամասում գտնվող **40քմ** մակերեսով հանրային սննդի օբյեկտում, ոգելից խմիչքների իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N4136/12 առ 2026 թվականի սեպտեմբերի 28-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 260828025622030 անդորրագրի դիմումատուն 2026 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Գևորգ Հովիկի Հովհաննիսյան*** անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք Երևան-Սևան մայրուղի թիվ 46 տեղամասում գտնվող հանրային սննդի օբյեկտում, իրականացնելու ոգելից խմիչքների իրացում (Թույլտվություն N388):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ **Վ.Բարսամյանի** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 28
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» օգոստոսի 2026 թվականի N 874-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գևորգ Հովիկի Հովհաննիսյան անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք Երևան-Սևան մայրուղի թիվ 46 տեղամասում գտնվող **40քմ** մակերեսով հանրային սննդի օբյեկտում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N4135/12 առ 2026 թվականի օգոստոսի 28-ի):
Հաշվի առնելով, որ ըստ N 260828025534030 անդորրագրի դիմումատուն 2026 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Գևորգ Հովիկի Հովհաննիսյան*** անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք Երևան-Սևան մայրուղի թիվ 46 տեղամասում գտնվող հանրային սննդի օբյեկտում, իրականացնելու հանրային սննդի կազմակերպում և իրացում (Թույլտվություն N387):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ **Վ.Բարսամյանի** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 28
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«27» օգոստոսի 2026 թվականի N 873-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետի և 32-րդ կետի ա/,բ/ ենթակետերի պահանջներով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, և հիմք ընդունելով Ա. Մազմանյանի 19.08.2026 թվականի թիվ 3983/07 դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները:
2. Ընդունել ի գիտություն, որ Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սահմանել, որ սեփականության իրավունքով Արտյոմ Մազմանյանին պատկանող 4-րդ թաղամասի 1-ին շենքի թիվ 2 բնակարանին կցակառույց 4.9 քմ արտաքին մակերեսով օրինական ճանաչված շինության համար 30 օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին 4000 ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն «Գեոկադ 55» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.օգոստոսի 27
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 872-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Աննա Շաբոյան Արտաշեսի անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ ք. Չարենցավան Պռոշյան փողոց թիվ 15 շինության տարածքում գտնվող **82քմ** մակերեսով առևտրի օբյեկտում, ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N4110/12 առ 2026 թվականի օգոստոսի 26-ի):
Հաշվի առնելով, որ ըստ N001446 անդորրագրի դիմումատուն 2026 թվականի չորրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Աննա Շաբոյան Արտաշեսի*** անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ ք. Չարենցավան Պռոշյան փողոց թիվ 15 շինության տարածքում գտնվող առևտրի օբյեկտում, իրականացնելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք (Թույլտվություն N 386):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ.Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 26
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 871-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ջ. Գրիգորյանի 24.08.2026 թվականի թիվ 4045/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով Ջիվան Գրիգորյանին պատկանող Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 4-րդ նրբանցք 4-րդ փակուղի թիվ 5 հասցեի գույքը բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 4-րդ նրբանցք 4-րդ փակուղի թիվ 5 (հողամասի մակերեսը՝ 0.18553 հա, առանձնացվող հատված-1), Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 4-րդ նրբանցք 4-րդ փակուղի թիվ 5/1 /հողամասի մակերեսը՝ 0.08601 հա, առանձնացվող հատված-2) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գեոդեզիայի և չափագրումների մասնագիտացված կենտրոն» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 26
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 870-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 24 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ, ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետի և 32-րդ կետի ա/,բ/ ենթակետերի պահանջներով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Ռ. Առաքելյանի 08.05.2026 թիվ 2225/07 դիմումը՝ ***որոշում եմ***.

Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 24 բազմաբնակարան բնակելի շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ, ինչպես նաև շենքի օրինական ճանաչված կցակառույցների պարագծով դրա տակ գտնվող 07-007-0048-0067 ծածկագրով 961.2 քմ հողամասը, հաստատված հատակագծի համաձայն, անհատույց, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով փոխանցել բազմաբնակարան շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:

1. Ճանաչել օրինական Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 24 բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները:
2. Ընդունել ի գիտություն, որ Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 24 շենքում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սահմանել, որ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Ռոբերտ, Էլմիրա և Արայիկ Առաքելյաններին պատկանող 3-րդ թաղամասի 24-րդ շենքի թիվ 6 բնակարանին կցակառույց 37.7 քմ արտաքին մակերեսով օրինական ճանաչված շինության, ինքնակամ բացված 1 դռան և 1 պատուհանի համար 30 օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին 28000 ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023MRTBYF ծածկագրի:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 26
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«26» օգոստոսի 2026 թվականի N 869-Ա

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 4-րդ շենքի 36 բնակարանի բնակիչ Էդիկ Աֆյանի 2026 թվականի օգոստոսի 25-ի թիվ 4062/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ պատգամավորների Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1995 թվականի հոկտեմբերի 26-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 12 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 6-րդ թաղամաս 5-րդ շենք 3 բնակարան) **«Ափյան Անդրանիկ Գրիգորի»** բառերը փոխարինել համապատասխան **«Աֆյան Անդրանիկ Գրիգորի»** բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 868-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անիմա Գուրմե» ՍՊԸ-ի« տնօրեն Անի Ջավարյանը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Արզական Անտառային փողոց թիվ 29/8 շինության տարածքում գտնվող **29/8 քմ** մակերեսով հանրային սննդի օբյեկտում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N4095/12 առ 2026 թվականի օգոստոսի 26-ի):

Հաշվի առնելով, որըստ N000120 անդորրագրի դիմումատուն 2026 թվականի երկրորդ կիսամյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Անիմա Գուրմե» ՍՊԸ-ին*** 2026 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում թույլատրելիր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Արզական Անտառային փողոց թիվ 29/8 շինության տարածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում իրականացնելու հանրային սննդի կազմակերպում և իրացում (Թույլտվություն N385):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ **Վ.Բարսամյանի** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 26
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 867-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անիմա Գուրմե» ՍՊԸ-ի տնօրեն Անի Ձավարյանը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Արզական Անտառային փողոց թիվ 29/8 շինության տարածքում գտնվող **154քմ** մակերեսով հանրային սննդի օբյեկտում, ոգելից խմիչքների իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N4093/12 առ 2026 թվականի օգոստոսի 26-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 000119 անդորրագրի դիմումատուն 2026 թվականի երկրորդ կիսամյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.«Անիմա Գուրմե» ՍՊԸ-ին 2026 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում թույլատրելիր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Արզական Անտառային փողոց թիվ 29/8 շինության տարածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում իրականացնելու ոգելից խմիչքների իրացում (Թույլտվություն N384):

2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վ. Բարսամյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.օգոստոսի 26
Ք.Չարենցավան